



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

<< 07 >> 12 2012թ. N: 327-Վ ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ Վ.ԱՐԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ԱՐՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «ժ» ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Արտակ Հայրապետյանի 2012 թվականի դեկտեմբերի 6-ի և դիմումը:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Վ.Արաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերստուգող Արտակ Հայրապետյանին 2012 թվականի դեկտեմբերի 7-ից ազատել զբաղեցրած պաշտոնից, միաժամանակ նրան ազատելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի առողջության կենտրոն» և «Ախուրյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների վերստուգողի պարտականությունների կատարումից:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Վ.Արաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Արտուշ Ասատրյանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:



Ա.ԳԻՉԻՐՅԱՆ